Արձանագրություն N 3
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/134 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 15.07.2020թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Անտոնյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Բագրատունյան /գնահատող/, Մ. Մանուկյան /գնահատող/, Ս. Ղազարյան /բացող/, Ջ. Հովհաննիսյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Թ.Հովեսյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/134» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Գ. Անտոնյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ 15.07.2020թ. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/134» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացվել է պարզաբանում այն է.

«Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանվում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագիրը՝ չպետք է հանգեցնի գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք, ինչպես նաև ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունից՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա: Կառ. 04.05.2017թ. N 526-Ն որոշման 21-րդ կետի 1-ին մասը սահմանում է ….Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Իսկ նույն որոշման 32-րդ կետի 1-ին մասի գ. կետով ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ Հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր): Որոշմամբ նշվում է՝ եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Հրապարակված մրցույթի հրավերում նշված է, որ մասնակիցը գնման հայտ ներկայացնելիս պարտավոր է ներկայացնել իր կողից առաջարկած ապրանքների ապրանքանյին նշանը, մակնիշը, արդադրողը:

Սակայն մրցույթի հրավերում նշված ապրանքը՝ սննդային ծանրոցը բաղկացած է տարբեր ապրանքներից, որոնք կարող են ունենալ տարբեր ապրանքանին նշաներ, իսկ մակնիշ չունեն:

Բնութագրում նշված չէ թե յուրաքանչյուր տողում նշված քաղցրավենիքի որ տեսակը ինչ քաշ կամ քանի գրամ պետք է լինի, որ ստանդարտին համապատասխան:

Փաթեթավորումը մի կողմից նշված է, թե ինչպես պետք է լինի, մյուս կողմից ներկայացված է պահանջ պատվիրատուի հետ համաձայնեցնելու»:

1.2 գնահատող հանձնաժողովի կողմից տրվել է հետևյալ պարզաբանումը.

- հարցում 1՝ <մրցույթի հրավերում նշված ապրանքը՝ սննդային ծանրոցը բաղկացած է տարբեր ապրանքներից, որոնք կարող են ունենալ տարբեր ապրանքանին նշաներ, իսկ մակնիշ չունեն:>

-պարզաբանում 1՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/134» ծածկագրով հրավերում որևէ ապրանքի մակնիշի նշման պահանջ նշված չէ,

- հարցում 2՝ <Բնութագրում նշված չէ թե յուրաքանչյուր տողում նշված քաղցրավենիքի որ տեսակը ինչ քաշ կամ քանի գրամ պետք է լինի, որ ստանդարտին համապատասխան:>

-պարզաբանում 2՝ տեխնիկական բնութագրում տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, որի արդյունքում 14.07.2020 թվականին կատարվել է հրավերի փոփոխություն՝ նշերով ընդհանուր ծանրոցի քաշը 0,6-0.7 կգ,

-հարցում 3՝ <Փաթեթավորումը մի կողմից նշված է, թե ինչպես պետք է լինի, մյուս կողմից ներկայացված է պահանջ պատվիրատուի հետ համաձայնեցնելու:>

-պարզաբանում 3՝ <փաթեթավորման համաձայնեցումը պատվիրատուի հետ պարտադիր է, հաշվի առնելով, որ փաթեթավորման վրա նշվում է պատվիրատուի անամորյա ուղերձը և այլն>

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Գ. Անտոնյան

..... Ս. Բագրատունյան

Անդամներ՝ ..... Մ. Մանուկյան

..... Ս. Ղազարյան

..... Ջ. Հովհաննիսյան

Քարտուղար՝ ..... Թ.Հովեսյան